

զմեծին Թորոսի, էառ զօր բազում ի նուրատին Սուլթանէն և եկն առնուլ զտէրութիւն ի վերա՝ Հայոց. և բազում չար հասուցեալ աշխարհիս Կիւլիկեցոց, յորմէ նեղեալ բնակիչք և իշխանք աշխարհիս, կամօք ձեռնառու եղն նմա, տիրեալ ի վերայ ինքեանց, Ուստի ընդ գալն նորա՝ Թուման փախէր յԱնտիոք, ուստի և եկեալն իսկ էր. և զորդի Թորոսին ամբարիշտք ունեք կալեալ օպանին:

(ՍՆՅՈՐԴՆ Ի ԵԿՊՈՒՄՈՒՆՈՒՄ)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԿԵԱՆՔԻ

Տ Ա Ր Բ Ե Ր Ը :

(ՇԵՐՆԱՆԻՆԻ Ե ԳԵՐԸ):

Սորանից յետոյ կ'անցնէ Հաքստհաուզն Հայերի մարմնակազմութեան վերայ, նոցա երկրիս ամենազեղեցիկ ու յարմարեղանք ժողովուրդներէ մինն ընդունելով: Հանգիստ, մեղմ, չափաւոր և պարկեշտ բնաւորութեան տէր կ'անուանէ Հայերին: Բայց ինչպէս Պետցօզըր, Նոյնպէս և սա, որ առաջինից շատ վաղ է Հայաստան ճանապարհորդել և Հայերի մէջ ապրել, Հայ վաճառականներին՝ բուն Հայաստանի մէջ բնակողներից կը զանազանէ, նոցա խաբրեայ և առևտրութեան մէջ բոլորովին կասկածաւոր հռչակուած համարելով: Սակայն իրրե սրամիտ բանադատ կը փնտռէ Հայ վաճառականների այս տղեղ յատկութիւններն ունենալու պատճառը, և իրաւ շատ բնականաբար հետեւեալ խօսքերով կը մեկնէ: Հայերը «օտար, թշնամի, իրանց ատող և արհամարհող ազգերի մէջ սփռուած լինելով, առանց պաշտպանութեան կամքի և բռնաւորութեան տակ հարկադրուած էին կասկածաւոր լինիլ, իրանց սիրալ ծածկել, այս, նաև խաբուսիկ և անհաւատարիմ՝ դառնալ»:

Հաքստհաուզն առանձնապէս կը դռնէ Հայերի նստանիւն կեանքը. Հայերը, կասէ նա, նաև

Պարսկաստանի և Թուրքաստանի՝ պատուի արժանի են իրանց տան մէջ: Այնտեղ կ'իշխէ հին նահապետական պարզ բարբըր՝ Նոքա ամեն տնային առաքինութիւններն ունին. նոքա բարեգործ են և հիւրասէր: Ամուր կ'պահպանեն իրանց ազգային սովորութիւնները և ամենից առաջ իրանց աղագային կրօնը: Բաց ի Հրէաները՝ չեկոյ ուրիշ ժողովուրդ, որ Հայերի չափ մարտիրոսներ ունեցած լինի: Հայերը միշտ անշարժ ու անխախտ մնացին:—Հայերը Հրէաներից այն գերազանցութիւնն ունին, որ նոքա մի ճշմարիտ հայրենիք ունին մինչև այսօր, մի ծննդատեղի, որտեղից նոքա դուրս են քաշուել, և դէպի ուր նոքա հետ նայել կարող են:

«Հայերի նահապետական կեանքը, կը շարունակէ Գերմանացի ուսումնականը, ժողովուրդի փոքր-աշխարհին—ընտանիքի մէջ կը ցրանայ: Ես ոչ մի ժողովուրդ չեմ ճանաչի, ուր ընտանեկան կապը այնպէս սերտ, ամուր և ներքին լինի, ինչպէս Հայերի մէջ. Հայերի ընտանեկան կեանքը և ընտանեկան սահմանադրութիւնը միւս Ասիական ազգերից կը զանազանուի: Պանացի սնուի դրութեամբ կամ վիճակով, ճանաչելով այս սնուի անկախութիւնը, հաւասար իրաւունքը և արժանաւորութիւնը, որ ընտանեկան սահմանադրութեան Նոյնպէս ևս կնոջ անձի մէջ կ'արտայայտուի: Ըստ իմ, սորա մէջ է Հայերի կոչումն մարդկային բարձրագոյն մշակութեան հասնելու, նմանապէս և նոցա մտաւոր բարձր ընդունակութեան մէջ է նոցա ապագայն, որ կ'իրեւայ Եւրոպիոյ և Ասիոյ միաւորութեան անդամ և միջոց պիտի լինի: Մահմետականները կնոջ վերայ իրրե կիսամարդի վերայ կը նային. կինը ի բնէ ծնած ըստբուն է տղամարդի: Ես կը կարծեմ՝ որ Եւրոպացոց ժողովուրդների կոչումն դէպի կրթութիւն զիտաւորապէս կնոջ մէջ մարդկային բնութեան հաւասար իրաւունքներ տեսնելու և խոստովանուելու ունորան խորը յարգելու մէջն է»:

Հաքստհաուզն, Հայերի ընտանեկան յարաբերութիւնների վերայ խօսալով և նոցա սերտ կապը ու միութիւնը ցոյց տալ աշխատելով՝ կ'ասէ, ՏՕրամեայ նահապետի տան երեք տոհմ միասին կապրին: «Այսքի ու հարստութեան զանա-

զանութիւն չկայ նոցա մէջ . ոչ մի անգամ իւր համար չի շահեր, չի աշխատեր, այլ միայն ամբողջութեան համար: Աղբայրները հաճութեամբ չեն բաժանուիր միմիանցից, և այս ծնօգնորի մահաց յետոյ կը պատահի Մի այսպիսի ընտանիքի մէջ մի տոհմի անդամները, ուրեմն բոլոր թոռները զանազան ամուսնութիւնից, բոլոր թոռները՝ միմեանց վերայ կը նայեն ինչպէս քոյր եղբոր, և այսպէս էլ կանուանեն մէկը միւսին:

Այնինչ շրջակայ ժողովուրդների մէջ կնաւաճառութիւնը հնուց մնացած միակ տեսակն է ամուսնութեան, և մատաղ աղջիկները առանձնացած ու փակուած կը մնան, Հայերի մէջ միմեանց հետ հաղորդակցութեան կատարեալ ազատութիւնը կը տիրէ: Գեռահաս աղջիկները բաց զխօս, առանց քօղի ուր կամին կերթան, երիտասարդները կարող են բաց իրանց սէրը յայտնել և աղատ հետամուտ լինիլ: Բայց այսպէս չեն և հարսները: Տաճարի առաջ արտասանած «Այո», առժամանակ վերջին խօսքն է՝ որ մի հարսից կը լսուի. սորանից յետոյ նա կերեալ ամեն տեղ, նաև տան մէջ, ծածկուած, մանաւանդ երեսի ստորին կողմը, բերանը բոլորովին ծածկած, նաև աչքերը քօղի տակ, նորան երբեք փողօցի մէջ տնանել կարելի չէ. նաև եկեղեցի տարներ երկու անգամ՝ կ'երթայ, Զատիկին և Ծննդեանը, թանձր քօղով ծածկուած: Այժմ մի օտար մարդ կը մտնէ տուն կամ այգին, նոյն ակնթարթին կ'անհետանայ: «Առաջին որդեծնութիւնից յետոյ, կը շարունակէ Հաքստհաուզներ, կը սխե նա խօսալ տան փողբերի հետ, և ապա մի քանի տարիներից յետոյ կը լրանայ նորա, ղատարարակութիւնը, և աղատ կը վարուի տան մէջ, թէև կրկին պարկեշտ չի համարուեր օտարների հետ խօսալ՝ կամ նոցա առանց քօղի երեալ:

Այժմ մարդ, կ'ասէ Հաքստհաուզն, եթէ մարդ այս զխաւոր բարբը Հայերի միւս յարաբերութիւնների նկատմամբ ուշադիր աչքի տակ տանէ, չէ կարող չը խօստովանուել, որ այստեղ մի մեծ մարդաճանաչութիւն, մի խորը ճանաչողութիւն մարդկային սրտի, հակումների և կրքերի կ'երեւայ:

Այս սովորութիւնների մէջ ճշշումն չկայ, որովհետև Հայ կանայք ծանր աշխատութիւններ

անիլ չ'են հարկադրուած, բաց ի անային և պարտիդի թեթեւ աշխատութիւնները: Նաև Հայ գիւղացին այնպէս շափաղանց քնքշաբար ու խղճօղաբար կը վարուի իր կենակցի հետ, որ նորան զաշտի վերայ աշխատել չէ տալի, չէ թող տալի արևի տակ այրուել: Այսպէս լատ Հաքստհաուզնի Հայոց կանայք իրանց արժանի իրաւունքները կը վայելեն և կը յարգվեն այրերից: Ասիոյ ոչ մի ժողովուրդի մէջ կ'ենն այսպիսի վիճակ չ'ունի: Մարդի վախճանելուց յետոյ կ'ենը կը բռնէ նորա տեղը և ընտանիքի կատարեալ գլուխ կը դառնայ. և այնպիսի պատուով և երկիւղածութեամբ կը հնազանդին նորան, ինչպէս հօրը — զխաւոր նահապետին: Այս միայն արեւելքի մէջ, նաև Եւրոպայի մէջ այսպիսի պատուաւոր դրութիւն չունի կ'ենը, կ'ասէ Հաքստհաուզն:

Այս տողերի ուշադիր ընթերցողը, եթէ Հայերի կեանքը նորան օտար չէ, կը դիտէր որ յիշեալ գիտնականի արած զխտորութիւնների մէջ մի քանի աւելորդ գովասանքներ կան մեր ընտանեկան կեանքի յարաբերութեամբ: Մի Եւրոպացու համար, թող երկինք և երկիր զլիսի մէջ ունենայ, այնու ամենայնիւ դժուար է մի օտար ժողովուրդի կեանքը, մանաւանդ Ասիական ժողովուրդի — անսխալ ճանաչել, թէև անուրանալի է որ զարմանալի հանճարով խորը թափանձել են Հաքստհաուզնի աչքերը մեր ընտանեկան կեանքի մինչև ամենամութ ու խորին անկիւնները, և որչափ մի օտարական անցաւորի հնարաւոր է, ճանաչել է Հայերի բարոյական կեանքի հիմքը — ընտանիքը: Հաքստհաուզն Հայ կանանց դրութիւնը շատ կը բարձրացնէ և սորանով Հայ հասարակութիւնը կանանց յարաբերութեամբ, մի զարգացած՝ մի գրեթէ դեռ ինչպէս պէտք է չեղած մարդկային յառաջադէմ անգամ կ'երեւայ: Այն ինչ կանացի սեռը դեռ Եւրոպայի մէջ իր մարդկային իրաւունքները չ'ունի, նա Հայ կանանց վիճակի վերայ խօսալով կ'ասէ՝ «Հայերը կը ճանաչեն այս սեռի անկախութիւնը, նորա մարդկային բնութեան հաւասար իրաւունքը, և ինչ որ մեր հասարակութիւնը կանանց անկախութիւնը ճանաչէր, նոցա մարդկային հաւասար իրաւունք տար, նորա մէջ իր բնութեան հաւասարութիւն տեսնէր, նա ամե-

նից առաջ էր — ինչպե՞ս էր քաղաքը և նոր-
հեռ, այրը նորան ևս մարդկային աշխատանքին
առանց զանազանութեան մասնակցիլ կը հրաւի-
րէր, և որ զխաւորն է՝ այս գործունէութեան
համար զարգանալու միջոց կտար: Գոնէ իր ձեռ-
նարկութիւնների ժամանակ սորա հետ կը խոր-
հրդակցէր և միշտ չէր ասի՝ «այս քու բանը չէ,
տունդ նստի դու քու կարն արա», ևամ զիւ-
ղացին, «բերանդ քեզ քաշի մարդի (առն) բանի
մէջ մի՛ խառնուի», և լին. և լին: Եթէ Հաւ զիւղա-
ցին կամ վաճառականը կնոջը իր ծանր գործքե-
րը չէ կատարել տալի, Գիւղացին դաշտի վերայ
աշխատեցնել, քաղաքացին նորան առօրեայ պի-
տոյքը դնել թոյլ տալի, և լին. ըստ իմ՝ այս ոչ թէ
կանացի սեռը յարգելու պատճառաւ է, այլ ա-
ռաջին, նորա մէջ այս աշխատանքն անելու յա-
ջողութիւնը չտեսնելն է. ուրեմն կնոջ մէջ ան-
հաւասարութիւն, անընդունակութիւն այս գործե-
րի մէջ տեսնել, և երկրորդ՝ նախանձը, որ կինը
այս աշխատանքների ժամանակ օտարների հետ
յարարելութիւն կարող է ունենալ և այրը ան-
հաւատարմութեան կասկածով նորան տանը նըս-
տած կը պահէ: Ահա մի վարմունք, որ պարզ
բնութեան ու կնոջ չանկասութեան տարրը իր
մէջ կը պարունակէ: Եթէ ամուսնութիւնները
մեր մէջ առաւել իրական հիմն ունենային քան
թէ լոկ զգացմունքը, և հաւատարիմ մնալը նա-
խապաշարմունքից և երկիւղից միայն չը պայմա-
նաւորվէր, այն ժամանակը երբէք մեր տղամարդիք
չէին խանգարի կնոջ՝ օտարների՝ ծանօթների
հետ ազատ և պատուաւոր յարարելութիւն ու-
նենալ, որ զարգացման վերայ իւր բարերար ազ-
դեցութիւնն ունի: Միտք հազորդելով և կարծիք
լսելով, խորհրդակցելով միայն կարելի է հարըս-
տացնել հասկացողութիւնը և մօտենալ կարծիք-
ներով միմեանց, որ դէպի միութիւն և համագործ
աշխատութիւն կը տանէ մի ընկերութիւն: Մա-
նաւանդ մեր հասարակութեան նման ուրիշ զար-
գացման միջոցներից—գրքերից ու թերթերից՝ կամ
ճիշտ ասեմ՝ որ սոցանից առաջ հարկաւոր է, կար-
գալու հնարքից զուրկ հասարակութեան համար:
Երեւի Հաքսոհատուն մեր հարեանների կանանց
ցաւալի վիճակը աչքի առաջ ունենալով, ուր

կինը մի առարկայ է և ոչ անձնաւորութիւն, և
մեր կանանց համեմատաբար նախանձիկ դրու-
թիւնը տեսնելով, նոցա մի քանի մանր մարդա-
վայել իրաւունքները խոժոռացոյցի տակ է բերել:
Մի՞թէ ազատութիւն, անկասութիւն, կնոջ իրա-
ւունք ճանաչել է, և վերջապէս մի սարսափելի
անընկալելութեան և առողջ դատողութեան ընդ-
դէմ չէ որ մեր ամուսնութիւնների մեծ մասը մի-
այն ծնողաց ընտրութեամբ և հաճութեամբ կը
կատարուին, որ Հաքսոհատունին անծանօթ է:
Աղջիկը ստիպուած է ամուսնանալ մի երիտասար-
դի հետ, որին առաջին անգամ նշան դնելուս
մօտիկից կը տեսնէ, որի ոչ բնաւորութիւնը, ոչ
հանճարը կը ճանաչէ, երկու խօսք հետը խօսեցած
չէ: Իսկ երիտասարդը կը բաւականանայ սովորա-
բար բաժինքի հարստութեան և տոհմի համբաւը
խմանալով:

Այն ինչ Եւրոպայի մէջ, ամիսներով, այս,
տարիներով կը ճանաչէ, կը փորձէ երիտասարդը
իր հարսնացուն, այսպէս և օրիորդը իր փեսայա-
ցուն, քաջ հասկանալով Շիլլէրի «զանգակ»,
քանզի երգի խօսքը,

«Ով յաւիտեան ամուսնութեամբ զինքը կապել
փափագի

Առաջ փորձէ, արդեօք սիրտը սրտին յարմար
կը գտնի.

Հաւանութիւնը կարճ է, զգո՞ւմն երկար կ'տևի»:

Մեր մէջ մի բոլակի՝ մի ժամի մէջ է ընտրու-
թիւնը և հաւանութիւնը. փորձել, տեսնել բնու-
թեամբ յարմար են զուգաւորութիւնները, ի՞նչ
խելքի տէր են, այս երկրորդական բան է. քանի՞
հազար թուման բաժինք ունի՞ կը հարցնեն, ար-
ծաթի կամ ոսկի քթաշներ ու բաժակներ էլ ունի՞
հարսը, ո՞ւմ որդին է տղայն, կնեան՞ է, բէյ է, իսկ
թէ զուլը զարտակ է, անբարոյական է թէ ոչ,
այն ամուսնութիւնից յետոյ միայն կ'իմացուի և
ուշադրութեան արժանի կը դառնայ: Լաւ կը լի-
նէր որ մենք էլ սովորէինք Գերմանացի բանաս-
տեղծի իրատը, «Ընտրութիւնը կամ հաւանու-
թիւնը կարճ է, զգո՞ւմն երկար», — Այստեղ այրը
առանց կնոջ խորհրդի զրկմէ գործ չի բռնէր,
բայց մեր մէջ կինը տղամարդի գործքերից տեղե-
կութիւն չ'ունի: Եթէ խեղճ կինը մի տեղեկու-

Թիւն կը խնդրէ՝ երկան գործքերից, նա նորան կը պատասխանէ՝ ինչ քու խելքի բանն է, մաղը երկարի խելքը կարծ կը լինի ասելով՝ կնոջ արժանաւորութիւնը կը խոստովանի:

Ինչ որ մեր այն գոված նահապետական կեանքին կը վերաբերէ, այսքան միայն կարող եմ աւելնէ՝ որ նա անհատի ինքնուրոյնութեան և զարգացման արդեաւ լի շատ տարրեր կը պարունակէ իր մէջ, և ընկերական գիտութիւնների աչքով նայելով՝ նա սկզբնական և արդի յառաջադիմութեան խոչընդոտ է, ու այսօր միայն յետագէմ ազգերին յատուկ: Այս տեսակ կեանքը նախապաշարմական և բռնաւորական շատ հիմունքներ կը թաղցնէ իր մէջ: Աւերմն Գերմանական Իդէալական (մտացածին) ոգևորութեամբ պէտք է այս սկզբնական կեանքի եղանակը այսօր պաշտենք, այլ սորան արդի ժամանակին յարմար ուղղութիւն տանք, սորա յառաջադիմութեան խանգարիչ կողմերը ջնջել աշխատենք: Իսկ ջնջելը լուսաւորութեան տարրը մեր մէջ մտցնելու և զարգացնելու անխուսափելի հետեւանքը կը լինի:

Հաքստհաուզներ յիշելով Հայերի երկրորդ միութեան կապը — կրօնը — մի քանի խօսք կ'ասէ Հայ Հոգևորականութեան վերայ, որ սրտի ցաւով համառօտ պիտի յիշեմ:

« Հայ քահանայք զրեթէ առանց բացառութեան անտաշ ու տգէտ անձինք են, որովհետև մեծաւ մասամբ արհեստաւորների դասից են յառաջ գալիս: Նոքա քահանայութեան պաշտօնն ընդունելու համար միայն կը կհարցաքննուին եկեղեցական ծէսերի և արարողութիւնների մէջ և նոցա կատարելու : Ժամանացութեան վերայ խօսալով կ'ասէ որ Հայոց եկեղեցեաց մէջ տօն օրերը քարոզելու կարգ կայ, իբրաց այս կարգը չի կատարուիր, զիստաւորապէս այն պատճառաւ՝ որ քահանայք սորա համար ընդունակ չեն, Հայոց եկեղեցին ունի նմանապէս հրամանակարար (սովոր) և կատէխիզմոս (քրիստոնէական). միայն եպիսկոպոսներից շատերն անգամ այս ճիշդ չը զիտեն:—Հայերը քահանային կը խոստովանուին իրանց մեղքերը, եթէ քահանայ չ'կայ՝ Հայր կարող է և աշխարհականին խոստովանուիլ, նեղի ընկած ժամանակը, անապատի մէջ, նաև քա-

րի, ծառի՝ սրբութեան փոխանակ բերանը հող առնելով*):

Հաքստհաուզներ յիշելով որ Հայ-Պաթողիկոսներ էլ կան, որոնք իրանց Հայ անուն չեն տալի՝ այլ «Պաթողիկ», կ'անուանեն, իբր թէ այս մի ազգի անուն է, Եջմիածնի նկարագրութիւնը կրակէ, Հայոց Հոռով՝ անուանելով նորան, Եջմիածնի կալուածքի և մուտքի վերայ խօսալով, որով վանքի ծախքը կը վճարուի, իսկ աւելորդը կ'ասէ Պատրիարքի (Պաթողիկոս) գանձարանը կը մտնէ, իբրացի այս և այն անհաշուելի մուտքերը, որ Հընդկաստանի, Պարսկաստանի, Թուրքաստանի և ըն վանքերից կգան այս գանձարանը կը ժողովուին**), որ Պատրիարքը յօգուտ եկեղեցւոյ գործ կ'ածէ, Թէ ի՞նչպէս, զժուար է մեկնել,»:

«Եջմիածինը և Պատրիարքարանը (Պաթողիկոսարան), կը շարունակէ Գերմանացի ուսումնականը, Հայ ժողովրդի ազգութեան և միութեան վերայ անհատի ազդեցութիւն ունի: Սա կեդրոն է ամեն ուխտագնացութեան: Գանգէսից և Ինդոսից, Եփրատից ու Նեղոսից, Աօզգայից, Նեփալից, Ս. Պօլսից այստեղ կը գան, և միմեանց եղբայրական ձեռք կը մեկնեն, իրար կը ճանաչեն և կը կապակցին: Այս ամեն կողմերից քահանայք այս տեղից պէտք է սուրբ Իւղը (Միւռոն) տանին, որ միայն Պաթողիկոսը օրհնելու իրաւունք ունի: Այսպէս ազգային եկեղեցւոյ միութիւնը արտաքուստ անդադար նորից կընդունուի և կը վաւերացուի:—Հայոց Աւարդապետների կամ վարդապետութեան վերայ խօսալով՝ կ'ասէ ընկել է այս կարգը: Մի քանիսը ճգնաւորական կեանք կը վարեն, և ժողովուրդը խիստ կը յարգէ նոցա: Մեծագոյն թիւը փառամոլութիւնից զրդուած վանքերը կը վաղեն՝ որ եկեղեցւոյ բարձր (աստիճաններ) կարգեր ստանան, որոնց միայն վարդա-

(*) Երբէք Հայոց եկեղեցին այնպիսի ոչ սովորութիւն, ոչ կանոն, ոչ օրէնքունեցած է: Արդեօք որ Հայէն ուսած է դայս, ոամ որ աղբիւրէն քաղած:

Ի. Խ. Բ.

(**) Այժմ նոյնպիսի արդեւանց բազումք նուազած են քաղաքական ինչ ինչ պատճառաւոր:

Ի. Խ. Բ.

պետները հասնել կարող են: Ընչամոլութիւնը, նախանձը, կեղծաւորութիւնը, մարմնասիրութիւնը կամ զգոյասիրութիւնը նրանց սովորական մեղքերն են: Այս կարգից են մեծ ժամօր հարուստ վանքերի վարդապետները, մանաւանդ Էջմիածնայ^{*)}: Հազիւ կը պատահէ որ աղնիւ, մեծաշնորհ և ուսումնասէն ընութիւններ, եկեղեցւոյ հոգւով վարուած վանքերը մօտեն Հայոց եկեղեցւոյ ճշմարիտ օգտի համար:

Մեր լեռնութիւնները լուսաւորեալ Եւրոպայ առաւել լաւ կը ծանաչէ քան թէ մենք: Մի Եւրոպացի գիտնական՝ որի հայրենիքի մէջ ժողովրդի բարոյական ուսուցիչը՝ քահանայն՝ առանց համարարանական կրթութեան չէ կարող ստանալ այն ծանր պաշտօնը, մի Եւրոպացի գիտնական՝ պատահելով մեր հոգեւորականներին՝ որոնցից շատերը հազիւ գրավարժ կարգով գիտեն, զարմանալի չէ որ այսպիսի կծու խօսքերով կը նկարագրէ նոցա մտաւոր զարգացման ստորին աստիճանը և նոցա ընաւորութիւնը: Մանաւանդ այն ժամանակուայ հոգեւորականներին հանդիպելով, երբ շատերը առանց Հայ լեզուով խօսալ կարողանալու քահանայական պաշտօն կստանային, բաւականանալով Աւետարանի տառերը ծռու ու մոռ ծանաչելով: Այն ժամանակը երբ քահանայացուին քննիչը հարցնելով «Քրիստոսը ե՞րբ է ծնել», նա փոխանալ պատաշխանւոյ կը հարցնէր Արա-

ցիւնն Կրօնի Քրիստէ, (ո՞ր Քրիստոս): Այս տխուր անցեալներից սորա նման շատ օրինակներ կարող ենք գտնել, որոնք իրաւունք կը տային Հայ հոգեւորականութիւնը այնպիսի թանձր ըստուերներով նկարագրել. բայց ես կը ձգեմ այս տհաճ ու անպտուղ յիշատակները և վերոգրեալների վերայ մի հայեցուածք քցելով կը վերջացնեմ յօդուածս համառօտ խորհրդածութեամբ, որ նորա հետ ուղղակի կապ չունի:

Մի ազգ, մի ժողովուրդ կարող է գոյութիւն ունենալ և իրրեւ ազգ ապրել քանի որ նա սեփական և զաղափարական տարրեր ունի: Հայի կեանքով հետաքրքրուող թէ բանիմաց օտարականը, թէ բուն Հայը կը խոստովանուի որ Հայերը, թէև տգէտ, թէև ցրուեալ, այնուամենայնիւ ազգային սեփականութիւններ ունին, առանց որի անկարելի էր որ նա իրրեւ Հայ այսօր մարդկութեան մէջ իր գոյութիւնն ունենար: Այս ազգային սեփականութիւններից մինը այստեղ առանձնապէս յիշել կը ցաւկամ, այն է մեր ազգային կրօնը և լեզուն, մեր զարգացած հին լեզուն, որ այսօր տէր լինելուն մեր գրականութեան և պատմութեան առաջին անձնաւորութիւններից մէկին, մեր անմահ Մեսրոպին ենք պարտական: Իրաւ կ'ասէ Ս. Մարգեն՝ «Մեսրոպի գիւտին է պարտական Հայ ժողովուրդը իր լեզուի և գրականութեան պաշտպանութիւնը: Առանց սորա (տառերի գիտի) Հայերը Պարսից և ուրիշների բռնութեան լծի տակ արդէն վաղուց կը կորէին» ինչպէս Ասիոյ շատ ազգերը: Միայն սորանով կարող էր

(*) Ա. Հաքոտիստեան Ներսէս Ե. ի Կաթողիկոսութեան առաջին ժամանակներն է Հայաստան ճանապարհորդել: Իւր գրաւոր աշխատութիւնը Անդղիերէն արդէն 1849 ին է հրատարակուել — կարծեմ այս ժամանակից քիչ յետոյ և Գաղղիերէն լեզուով: Գերմաներէն 1856 ին Ուրեմն նորա Հայոց հոգեւորականութեան վերայ արած նկատողութիւնները ներկայ հոգեւորականութեանը չի վերաբերի եւ յարմարի, եթէ այժմ նա յառաջագիմուծիւն է արել և իր ծանր պաշտօնին խղճի մտօք եւ արդարութեամբ կը ծառայէ: Հաքոտիստեան հիացած է Ներսէս Ե. ի հանճարի եւ գործունէութեան վերայ. այստեղ չի յարմարիր նոցա խօսակցութիւնները մէջ բերել և մեր անմահ Հայրապետի մտքերի հետ ծանօթանալ, նորա ճշմարիտ ազգասիրութիւնը ծանաչել:

(*) Եւրոպացի ուրիշ ուսումնական ճանապարհորդներ (Գաղղիացի, Անդղիացի) Հայոց բարոյական կեանքի վերայ գրեթէ միեւնոյն նկատողութիւնները կանեն, ինչ որ Պետցօլը կամ Հաքոտիստեանը — միայն աւելի ընդարձակ կամ համառօտ, այս պատճառաւ աւելորդ էր նոցա նկատողութիւններն եւս յիշելով երկարաբանել:

Հայոց եկեղեցին պահպանուել, միայն նորանով կարող էր հազար տարիներից առաւել բռնութեան լծի տակ գանուող ժողովուրդի ազգութիւնը պահպանուել¹¹։

Մեր նախնիք իրանց նեղ ու ընկճեալ շրջանի մէջ մի լեզու են մշակել և այն կատարելութեան հասցրել, որ Եւրոպայի մեծահռչակ լեզուագէտները (Բոլ. Գոթմարկան Բերգման-Էլեմ Նիւման, Պէր-Բան) ոճերի հարստութեան, քերականական ճշգրտութեան և բառերի ու բառակազմութեան կողմից Լատիներէնից և Հին Յունարէնից ցած չեն դնել¹²։ Ուրեմն այն լեզուներից որ Հին քաղաքակիրթ ազգերը դարերով մշակել են և որոց գրականութիւնը Եւրոպայի այսօրուայ լուսաւորութեան հիմն է եղել — այս մեր ազգային՝ մասամբ խորդացած սեփականութիւնը, իրաւ բովանդակութեամբ ազ.բատ է, միակողմանի և քիչ հեղինակած գործքեր ունի, դոնէ որչափ մինչև ցարդ յայտնի է։ Բայց այս շատ բնական է մի սկսող գրականութեան համար, մանաւանդ անդադար օտար ազդեցութեան տակ հեծող գրականութեան։ Եւրոպայ էլ իր գրականութիւնը թարգմանութիւններով օտարների գործքերը ուսանելով ու նոցա նմանելով սկսեց։ Հին դասական աշխատութիւնները (Ընտիր մատենագրութիւն) թարգմանելով և նոցա ուսանելով՝ իր նորը նոցա վերայ կառուցց։ Այսպէս սկսան և մեր նախնիք։ Բայց տարաբախտաբար քաղաքական դառն հանգամանքները խափանեցին նոցա շարունակ յառաջ քայլել և դարերով անմշակ մնացին նոցա գործքերը և վերջը անյայտացան, խորդացան իրանց նախորդներին՝ մինչև 18-րդ դարը։

Մխիթարեանք, որոնց գրականական բարձր նշանակութիւնը դեռ մեր կարգացող դասը չէ ճանաչել, դեռ կրօնական նախապաշարմունքը կը կուրացնէ այն անձանց գրականական ուրիմ ազդեցական արժէքը խոստովանուել։ այժմ Մխիթարեանք էին մեզ մեր խորդացած՝ մեր նախնեաց լեզուն և գրականութիւնը կրկին մեզ սովորաց-

նողը։ փոշիների, աւերակների տակից և վանքերի մաւրջ ծակերից հանողը, և մեզ մեր այսօրուայ ունեցած տեղեկութիւնը տուողը մեր լեզուի և մեր պատմութեան վերայ։ Այժմ մենք լուենք՝ գործքը նոցա կը գովաբանէ, և լուսաւորեալ Եւրոպայ վաղուց կը ճանաչէ նոցա աշխատութիւնը։ Մխիթարեանց աշխատանքը մեր ազգային գրականութեան վերականգնութեան համար խոստովանուելը՝ միայն մտքով կոյրերը իսկ Հայութեան գէմ մեղանչել կը մեկնեն։ Մխիթարեանք էին որ մեզ Բառդիբք ու գիրք տուին հասկանալ մեր անցեալը, ճանաչել մեր հայրենիքը և շարժուելով միջոց հոգալ յառաջ դիմելու, կարգաւ ու գրել սիրել, մեր ազգային տարրերը զարգացնել, որ չը մեռնինք իրրեւ ազգ։ Եւ այսօր ահա նոքա են որ մեր Հին հարուստ լեզուի վերայ նորը հիմնել ջանալով, սորան քննելով, անդադար կաշխատեն մեր նոր գրականութիւնը և լեզուն կանոնաւորել։ Մեր բոլոր դասագիրքերը սոցա ենք պարտական։ Եւ արդի Հայկական գրականութեան հորիզոնի վերայ երևող դիտնական մի հատ աշխատութիւնը, Մխիթարեան¹³, Այսնեան քննական քերականութիւնն¹⁴, է, որ մեր օրերի գրականութեան մեջ իր նման ուրիշ ծանր ու պիտանի աշխատութիւն չ'ունի, և առհասարակ մեր նոր գրականութեան մեջ՝ իրրեւ լեզուագիտական աշխատութիւն իւր նմանը քիչ ունի¹⁵։ — Իսկ մենք գրեթէ մասնակից չ'ենք եղել Մխիթարեանց այն մեծ աշխատութեանը, որ մեր բովանդակ ազգի (ինչպէս նա և Վաթիկեաց) շինութեան համար է¹⁶։

(*) Բեռլինի գիտութեանց ակադէմիային, Հայագէտ Պետերսմանը, այս փննական փերախնութեան վերայ մի բանադատութիւն ներկայացրեց, որ նորա մեծ արժանաւորութիւնը ցոյց է տալի։ Պետերսմանը այս մասին Սիսն. Երուսաղէմի ամսանորթի մէջ եւս մի յօդուած է գրել (Sisn. Սիսն., 1869. Ատետր)։

(**) Ճշմարտութեան դէմ մեղանչել կը լինէր, եթէ Պ. Նազարեանցի օգտովները, նոր գրականութեան եւ երիտասարդութեան վերայ ունեցած ցոփելի ու պողաբեր ազդեցութիւնը իրրեւ բացառութիւն չը լիշէի։

(*) Բոլ. Գոթմարկան Բերգման-Էլեմ Նիւման, Պէր-Բան, նմանապէս Բոլ. Վերգման-Էլեմ Նիւման, իրաւաբանի նորոգոյն Գոթմարկան Բերգման-Էլեմ Նիւման։

Հարցնենք այժմ, ինչ պէտք էր մեզ անել՝ որ համազօր աշխատէինք մեր ազգութեան տարրերը զարգացնել և յառաջ դիմել ժամանակի հետ ձեռն ի ձեռն:— Ամեն բանիմաց կը պատասխանէ որ՝ մեզ լուսաւորութիւն, մտաւոր կրթութիւն պէտք է:— մեզ պէտք են քաղաքացիներ, որ տեղից միայն յառաջադիմութեան ընդունակ նոր սերունդ կարող է ծնիլ: Մեզ պէտք են բարեկարգ դպրոցներ, որոնցով միայն մեր թշնամու դէմ պատերազմել կարող էինք: Իսկ մեր թշնամին, հետու չ'երթանք, մենք ինքներս ենք:— մեր տգիտութիւնը, մեր նախապաշարմունքը: Ամեն խելացի Հայ՝ եթէ նա իր շրջակայքը կը ծանաչէ, իր զէնքերը միայն իր դէմ պէտք է ուղղէ, բարոյական ու մտաւոր զարգացմանը, արուեստներին և գիտութիւններին ծանապարհ տալու: Բաց ի այս պատերազմը՝ ուրիշ չ'ունինք և չէ պէտք մեզ. մենք միայն այս պատերազմից օգուտ քաղել կարող ենք: Եթէ մտաւոր և բարոյական զարգացումն արժարժի մեր մէջ, մեր գոյութիւնը իրրեւ ազդ ապահովացած է: Ոչ մի զօրութիւն, ոչ մի բռնութիւն բարոյականին ու մտաւորականին յաղթահարել չ'է կարող:— մանաւանդ այս դարի մէջ: Եթէ մենք (Լուսաւորչական և Վաթիկէ Հայերս) այս ճշմարտութիւնը կը հասկանանք, պէտք չէ որ կրօնական խտրութեան պատճառաւ միմեանցից բոլորովին բաժանուինք և միազօր չը ձգտենք դէպ ի զարգացումն, որ մեր նուազ ազգային զօրութիւնը աւելի կը նուազեցնէ: Մեր մտաւոր զարգացմանը վնաս են այսօր կրօնական վէճերը, մենք այսօր պէտք է այսպիսիքը մի կողմը ձգելով, միասին մեր մտաւոր զարգացման մշակութեան վերայ ծանր կերպով հոգայինք: Այո, ամեն Հայի համար սուրբ պարտք է իւր Առաքելական կրօնը պինդ պահպանել, այն կրօնը՝ որ այսօր մեր ազգութեան մի տարրն է դառել, այն կրօնը՝ որի համար դարերով արիւն թափելով մեր նախնիք նորա հետ և մեր ազգութիւնը կորստից ազատեցին, որ սարերից սարեր փակցնելով իրրեւ լիբական պաշտպանեցին և մեզ իրրեւ անփոխադրելի ժառանգութիւն թողեցին: Իսկ այսպիսի մի ժառանգութիւն պաշտպանելու համար կարեւոր չ'է որ ամեն նախապաշարմունքի թող տանք մեր մէջ

բաժին բաժանմունք քցի, մեր մտաւոր զարգացմանը և ազդիս միութեանը վնասէ: Արդէն վաղուց ժամանակ է մտածել այս չարիքների առաջը առնելու և միութեան, ազգովին զարգացման հնար միտտելու: Այսօր մեզ այս տարրերութիւնը վնասել չէ կարող, եթէ մենք մեր ձգտումները դէպի զարգացումն միացնենք, որ ժամանակով անշուշտ մեր կրօնական տարրերութիւնը և ատկութիւնը կը ջնջէ և այս կէտի մէջ ևս մեզ կը միացնէ: Առանց զարգացման անկարելի է կրօնական խնդիրների և կարծիքների մէջ միանալ. անկարելի է կրօնական միութիւն: Աւրեմն միայն զարգացումն—մտաւոր կրթութիւնն է մեր ազգային գոյութիւնը ապահովացնողը և մեզ դէպ ի ճշմարիտ ու երջանիկ կեանքը վարողը: Իսկ զարգացման գլխաւոր և անհրաժեշտ միջոցը բարեկարգ դպրոցներն:

Այս հասարակաց ազգային դպրոցների նիւթական օգուտը՝ որից կախուած է քաջ դաստիարակների ներկայութիւնը և դասատուութեան միջոցները, ամեն մտածող կարող է հիշտութեամբ տեսնել: Իսկ մտաւոր օգուտը այս հանդամանքների մէջ դաստիարակուած ու զարգացած նոր սերունդի միութիւնն է, և ընկերութեան մէջ հաւասար եռանդով աշխատելու կամքը:—Այս տողերը գրողը բաց ի միութեան—Ազգային միութեան փափագելի վիճակը՝ ուրիշ բան չ'ունի աչքի առաջ: Նա կը տեսնէ Եւրոպացւոց յառաջադիմութիւնը, օգուտը այսպիսի դպրոցների, և առհասարակ բարեկարգ դպրոցների անչափ ազդեցութիւնը մարդկութեան զարգացման վերայ, և այս միայն կը դրդէ նորան գրել այս տողերը և կը հրաւիրէ Հայ հասարակութեան գործունեայ անդամները այսպէս սկսել ազգային միութեան և յառաջադիմութեան հիմքը ձգել, որովհետեւ այս է զարգանալու միակ ծանապարհը՝ որի առհասարակեանք մեր աչքի առաջ ունինք լուսաւորեալ ազգերի մէջ: Եթէ կամենում ենք չը կորէլ իրրեւ Հայ՝ միանալ պէտք է մեզ մտաւորապէս, և դարգանալ, որով ոչ միայն մեզ օգուտ կը բերենք, այլ և մարդկութեան մշակութեանը աշխատակից լինելով, մենք ևս մեր յատուկ հայեցումներով նորա խնդիրները լուծելուն գործակից լինելով,

մարդկութեանը շահ բերող և արժանաւոր ան-
գամ կը լինինք: Աւրեմն աշխատելով մեր ժողո-
վուրդը զարգացնել՝ ոչ միայն ազգասիրութիւն
կանեն մեր գործունեայ պարոնները, առաջնորդ-
ներն ու հոգեւորականները, այլ և մարդասիրու-
թիւն, որովհետեւ մարդկութեան միտեար անգամ
կը զօրացնեն, նորա գործունեայ անգամների թիւը
միով բազմացնել կը ջանան:

Եկէ՛ք ուրեմն, մի ծուլանանք, թէ հոգեւորա-
կան և թէ աշխարհական, թէ զարգացած երի-
տասարդներ թէ հարուստներ, մինը խելքով միւ-
սը դրամով աշխատենք մեր ազգային տարիքը
զարգացնել: Մանաւանդ Տաճկահայոց կ'ուզեմ
իմ խօսքերը որոնք Եւրոպայի լուսաւորութեանը
առաւել մօտ, Բարձր Դրան շնորհքը վայելելով
իրանց մտաւոր զարգացման լծակը իրանց ձեռքին
ունին, բայց՝ ճշմարտութիւնը խոստովանուելով՝
իրանց իրաւունքներից և այս յարմար միջոցից
գրեթէ օգուտ չեն քաղել: Արդայ՝ ժամանակ
որ վա՛յ կը տանք այս կորցրած յարմար միջոցի
վերայ, այս զարգացման հիմն ձգելու յաջող ժա-
մանակի կորստի վերայ: Ապա եթէ հաղար բերան
Տէր Տէր բաց մեզ աղաղակներ, մեզ ոչ միայն
չեն ճանաչիլ ու չեն բանալ, այլ և ով գիտե
դէպ ի ուր քչեն և ինչ վիճակուի մեզ: Այժմ
աշխատել պէտք է, ամենայարմար ժամանակն է:

Մեր զարգացած երիտասարդները Եւրոպայի
սնտոի նորաձեւութիւնները օրինակելու փոխանակ
և ժամանակը սնտոի վատնելու, թող Եւրոպա-
ցւոց հասարակաց դաստիարակութիւնները օրինակեն,
մեր ժողովրդի միտքը բանան, հիմնաւոր ընկերու-
թիւններ կազմեն յօգուտ յառաջագիմութեան:
Իսկ մեր հարուստները, որոնք՝ ցաւելով պիտի
ոխշեմ Գերմաներէն «Ա. Ա. Մայն», նշանաւոր
օրագրի խօսքերը, մեր հարուստները՝ որոնք միայն
իրանց քսակների համար կը հոգան՝, մարդավա-
յել ու գովելի չէր լինի որ նոքա իրանց աւելոր-
դից գումարներ կազմէին, որով պիտանի գրքեր
թարգմանել տալով՝ զարգացնելու միջոցները
գիւրացնէին, կամ ընդունակ պատանիք Եւրոպա-
յի բարձրագոյն դպրոցներն ուղարկէին (մի երկու
ազնիւ Հայ հարուստների օրինակին նայելով), ուր
նոքա ուսումը կատարեալագործել կարող էին,

կամ երկրագործութեամբ, արհեստագիտութեամբ
պարապել, որ մի ժողովրդի տնտեսական կեանքի
բարօրութեան և ապահովութեան հիմն են: Մի-
թէ առաւել ուրախալի չէր լինի հարուստներին
նայել իրանց օգնութեամբ զարգացած երիտասարդ-
ների վերայ, որոնք հասարակաց տղիտութիւնը և
թշուառութիւնը սակաւացնելով կը դբաղէին,
քան թէ այն ոսկու անշարժ տոպրակներին, որոնք
լցնելով ու լցնելով նոցա երկրագործութիւն կը
մատուցանեն և վերջը նոցանից ստիպուած լինե-
լով բաժանուել, ո՞վ գիտէ որ մերձաւոր կամ
հեռաւոր շապլին կը թողուն կամ ո՞ւմ ձեռքը
կ'անցնի: Մեր եկեղեցականների պարտքն է մանա-
ւանդ աշխատել յօգուտ հասարակաց յառաջա-
գիմութեան գումարներ ժողովել, որոնք ժողովրդի
մէջ նշանաւոր ձայն ունին: Եւ ունեցած եկե-
ղեցական գումարները այնպէս գործ ածել, որ օ-
րինաւոր արդիւնք բերեն

Յ. ԼԷ:

Հայրենիք:

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԱՆՑՈՒԿ ՀՈԳԻՌՈՅ

Չարթիր սիրուն դու իմ մանկիկ,
Քանի՜ ննջես հեծելով,
Չքնաղ գէմքից լոյս Արեգին
Ճաճանչել է խայտալով:

Հատ օրօրներ ես երգեցի
Տխուր աչացս արցունքով,
Բաց քո պայծառ արտեանունը,
Հրկշտակի վե՛հ նայուածքով:

Ծնած օրից քո ճակատիդ
Դրոշմեցի Փրկչին Խաչ,
Որ դու լինիս միշտ անվեհչելի,
Հողուով աղատ, սրտով քաջ:

Թէ վատ բաղդի թշուառութեանց
Գերել են քեզ տեսիլներ,